Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 24-ի N 1459 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ, ՏԱՐԵՑՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով պետական վկայագիր տրամադրելու միջոցով՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց համար (այսուհետ՝ շահառու) խնամքի ծառայություններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Յուրաքանչյուր շահառուի, իր գնահատված կարիքին համապատասխան, տրամադրվում է մեկ պետական վկայագիր:

3. Պետական վկայագրի հիման վրա շահառուին խնամքի ծառայությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման համաձայն հավաստագրված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ կազմակերպություն)՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից:

4. Պետական վկայագրի հիման վրա կազմակերպությունը խնամք է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանված կարգով:

5. Պետական վկայագիրը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում:

II. ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Պետական վկայագրի միջոցով ծառայություն ստանալն ընտրում է շահառուն (կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ խնամակալության մարմինը):

7. Շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ խնամակալության մարմինը խնամքի ծառայությունից օգտվելու նպատակով պետական վկայագիր ստանալու համար առձեռն կամ փոստային կապի միջոցով կամ առցանց (էլեկտրոնային) եղանակով դիմում է՝

1) երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրելու դեպքերում՝ նախարարություն, որը պետական վկայագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կողմից տրված՝ երեխային շուրջօրյա խնամք տրամադրելու վերաբերյալ եզրակացության հիման վրա.

2) երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու դեպքերում՝ սոցիալական աջակցության տարածքային մարմիններին (այսուհետ՝ ՍԱՏՄ).

3) տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամք (շուրջօրյա, տնային պայմաններում) տրամադրելու դեպքերում՝ ՍԱՏՄ:

8. Շահառուի (կամ նրա օրինական ներկայացուցչի կամ խնամակալության մարմնի) դիմումը 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված կարգով, սույն կարգի 7-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո, երեխաների շուրջօրյա խնամքի դեպքում՝ նախարարությունը, իսկ մնացած դեպքերում՝ ՍԱՏՄ-ն կազմակերպում են խնամքի տրամադրման գործընթացը՝ շահառուին տրամադրելով պետական վկայագիր, և երեք աշխատանքային օրվա ընթացքում ՍԱՏՄ-ն դրա մասին գրավոր տեղեկացնում է նախարարությանը:

III. ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9. Հիմք ընդունելով տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը լիազորված պետական մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ սահմանված կարգով հավաստագրված կազմակերպության դիմումը՝ նախարարությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպության հետ կնքում է պետական վկայագրով համապատասխան ծառայություն-ները տրամադրելու մասին պայմանագիր:

10. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո տվյալ կազմակերպությունը գրանցվում է պետական վկայագրով ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ցանկում (այսուհետ՝ ցանկ), որը հրապարակվում է նախարարության պաշտոնական էլեկտրոնային կայքէջի գլխավոր էջում: Կազմակերպությունների ցանկը կարող է փոփոխվել կնքված պայմանագրերի խզման կամ նոր կազմակերպությունների՝ ցանկում ընդգրկման դեպքում: Ցանկում ներառված կազմակերպությունը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ ցանկից՝ իր դիմումի համաձայն կամ պայմանագրի լուծման դեպքում:

IV. ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

11. Պետական վկայագրի հետ մեկտեղ շահառուին տրամադրվում է սույն կարգի 10-րդ կետում նշված ցանկը:

12. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը՝ տրամադրված ծառայությունների դիմաց վճարում կատարելու նպատակով կազմակերպությունը նախարարություն է ներկայացնում հաշվետվություն, որում ներառված են տվյալներ տրամադրված ծառայության և տվյալ ծառայությունից օգտված անձանց անձնական տվյալների

մասին, կազմակերպության և շահառուի միջև կնքված հանձնման-ընդունման արձանագրությունը, պետական վկայագրի հիման վրա տրամադրված ծառայության կատարողականը:

13. Պետական վկայագրի հիման վրա տրամադրված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն կարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և տարեկան հատկացումների կատարման եռամյակային համամասնություններով նախատեսված միջոցների սահմաններում:

14. Շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ խնամակալության մարմինը, ստանալով պետական վկայագիր, տրամադրված ցանկից ընտրում է իրեն անհրաժեշտ ծառայություն մատուցող կազմակերպությունը և ներկայանում համապատասխան ծառայություն ստանալու համար:

15. Կազմակերպությունը որոշմամբ սահմանված կարգով տրամադրում է խնամքի համապատասխան ծառայություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 24-ի N 1459 - Ն որոշման

Ձև

ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Կտրոն	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պետական վկայագրի համարը ---------- 1. Շահառուի անունը, հայրանունը, ազգանունը _____ 2. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____ 3. Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալները _____ (անվանումը, սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)	ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ N ---- 1. Շահառուի անունը, հայրանունը, ազգանունը _____ 2. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____ 3. Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալները _____ (անվանումը, սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

4. Խնամքի ծառայության տեսակը _____ 5. Պետական վկայագրի գինը _____ 6. Տրամադրման ամսաթիվը _____ 7. Շահառուի կարգավիճակը _____ 8. Պետական վկայագիրը տրամադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը _____ **Սույն պետական վկայագիրն ուժի մեջ է մինչև՝** _____ _____ 20_____թ.	4. Խնամքի ծառայության տեսակը _____ 5. Պետական վկայագրի գինը _____ 6. Տրամադրման ամսաթիվը _____ 20_____թ. 7. Շահառուի կարգավիճակը_____ 8. Պետական վկայագիրը տրամադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը _____ _____ **Սույն պետական վկայագիրն ուժի մեջ է մինչև՝** _____ _____ 20_____թ. **Սույն պետական վկայագիրը շահառուին տրամադրվում է ԱՆՎՃԱՐ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ